չենք համարում այստեղ եւս դնել, գիւրութիւն ընծայելով գաղափար կազմելու այն ընթերցողներին, որոնք առիթ չեն ունեցել տեսնել մեր այդ աշխատութիւնը։ Բնագրի տառերը հաստ են, կարծես, նըկարուած, խոշոր. իւրաքանչիւրի միջին մեծութիւնը 0,8 սմ. ուղղահայեաց (պատկ. 1), բայց ոչ ուղղանկիւն, ինչպէս յիշատակարանի միջին երկաթագիրն է (պատկ. 2).

գործ, ընտիր իւր գրչութեամբ և յղկուած, մաքուր մագաղաթով, որ հորթի կաշուց է։

Բայց տարաբաղդաբար այդ փառաւոր գործը մեր ձեռքն է հասել թերի, ինչպէս և Վենետիկի ձեռագիրն էր. սկսւում է Ժ. տետրից Մատթ. ԻԳ. 35. «եսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն»...։ Կիսատ է և վերջից. Մրկ. «Գայ յս. և առնու...»։ Կորուստն զգալի ոչ միայն բնագրի համար,

Պատկեր 3

իւրաքանչիւր երեսը 17 տողից բաղկացած։ Աւետարանների սկսուածքները մի տող մանրանկարչական են (պատկ. 3. 4), մնացած երկու տողը ոսկեգիր. նաև հատուածների առաջին տողերը մանրանկարչական տառերով սկսուած ոսկեգիր են, ինչպէս եւ բնագրի մէջ «յս.», «ած.», «որդի այ.», «տր.» իրենց հոլովումներով։ Այսպիսով մեր առաջ ունինք մի չքեղ

այլ և աւելի մանրանկարչական տնօրինական պատկերների և խորանների համար, որ սկզբում պիտի լինէր. մնացել են միայն Մարկոսի, Ղուկասի և Յովհաննու սկըզբնազարդերը և բազմաթիւ լուսանցքի զարդեր, որոնցով և գաղափար ենք կազմում աւետարանիս զարդանկարչութեան մասին։

Մարկոսի սկզբնազարդը (պատկ. 3) քառանկիւն է, կեդրոնում մի մեծ հիւսկէն